10.02.2020թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՈՐՈՇՈՒՄ թիվ 405475/01
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա.Մնացականյանս, ուսումնասիրելով 10.02.2020 թվականի թիվ 1363 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, քննելով թիվ 1363 վարույթը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

«ԷՍՏ» ՍՊԸ-ի տնօրեն Տիգրան Գասպարյանը (ՀՎՀՀ՝ 08418203, հասցե՝ Գեղարքունիք, Սարուխան, Սուրեն Մանուկյան փ" 13/1) ՀՀ Կառավարության 28.06.2018թ-ի 737-Ն որոշման 8-րդ կետով սահմանված ժամկետում չի ներկայացրել **2019 թվականի նոյեմբեր ամսին ՀՀ պետական սահմանով տեղափոխված ապրանքների վերաբերյալ փաստաթղթերի ճշգրտված ձևերը:** Նկարագրված արարքի համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169^2-րդ հոդվածով:

Կողմին հայտնաբերելու նպատակով ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: Գործում առկա չէ առարկություն կամ բացատրություն:

Այն փաստը, որ Տիգրան Գասպարյանի կողմից վերջին մեկ տարվա ընթացքում նման իրավախախտում չի կատարվել, ուստի կատարված իրավախախտման համար պատասխանատվություն է նախատեսվում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169^2-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն որի իրավախախտման համար նախատեսվում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի համաձայն տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Հաշվի առնելով վերոնշված հանգամանքները վարչական մարմինը վարչական տույժ նշանակելիս ապահովում է համաչափություն կատարված արարքի և նշանակվող տուգանքի չափի միջև, ուստի հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինիս կողմից թույլ տրված իրավախախտումը ունի նվազ նշանակություն և թույլ է տրվել առաջին անգամ, և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169^2 հոդվածի 1-ին մասով, 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 234 հոդվածով, 282 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169^2 հոդվածի 1-ին մասով, Տիգրան Գասպարյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նախազգուշացում:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ